մարաւոր տեղւոյ մը ...ոյ, ուր պիտի պատսպարին աղքատներ և անկարող ծնողաց զաւակներ, ուսմունք և արուեստներ սորվելով։ Այս հաստատութիւնը պիտի խնամուի Իտալիոյ մէջ կազմուած մի Ընկերութեան նըպաստիւը, որոյ նախագահն է Լինքն Իշխանը։

Սակայն կը ցաւինք որ Իշխանը քաղաքական ընդունելութեան համեմատ կրօնական ընդունելութիւն չըգտաւ Լատինաց կողմէն սրբազան տեղեաց մէջ, որուն պատճառ կը համարուին Յիսուսեան կրօնաւորները, որոնք իբր թէ Ս. Պապէն հեռագրական յատուկ պատուէր առած են եղեր ընաւ կրօնական հանդիսաւորութիւններ չը կատարել ՚ի պատիւ Իշխանին և հետը անտարբեր վարուիլ իբրև բանադրուածի հետ, քան որում Իշխանը Իտալական կուսակցութեան մէջ անտի–պապական է։ Գուցէ սա էր պատճառն, որ Յիսուսեան կրօնաւորները բոլորովին սառնասիրտ գտնուեցան և միայն Ֆրանչիսկեանք տեղ տեղ Իշխանին ուղեկցեցան։

— Այս ամսոյ մէջ քաղաքս ժամանեց Ալըմանիոյ Հիւսիսային Գաւանակցութեան նոր Հիւպատոսը Բարօն Ֆօն Ալպէն, որ նշանաւոր պաշտօններ վարած է իւր Տէրութեան համար և Ջենեռալի տարիներ ունի։

Այսու ի նմանապէս թէ Բրուսիոյ թագաժառանգ Իշխանը առաջիկայ ամիսներուն մէջ այցելութեան պիտի գայ ՚ի սուրբ քաղաքս։

Հրեշտակապետն վանուց Սրբոյ Թանգարանին նուիրուած գրչագիր գրեանքը։

1 Անկլառա պատմագիր աւագին թարգմանութիւն հարազատ, բոլորագիր գրեալ ՚ի վերայ բամբակեայ հին թղթոյ, քանի մի տարի յետոյ քան զթարգմանութիւնն։

2 Եսայեայ մեկնութիւն յՈսկեբերանէ, հին բոլորագիր, բայց թերի։

3 Գրիգորի Նիւսացւոյ յաղագս մարդկային բնութեան և ընախօսութեան, նօտրագիր հին հաստատուն թըղթեայ, գրեալ ՌՁԵ (1636) թվին։

4 Ներսէսի Լամբրոնացւոյ մեկնութիւն սաղմոսաց Դաւթի, նօտրագիր, հաստատուն թղթեայ, թերի։

5 Աւետարան փոքրագիր մագաղաթեայ, բոլորագիր, մանրանկար ընտիր պատկերօք ՚ի լուսանցս, թերթ մի թուղթ անկեալ է յորում է թըւականն և յիշատակարանն։

6 Յովհաննու Եղխկաղաի Հնդկայ նուիրակի գիրք կոչեցեալ «Վահան սուրբ եկեղեցւոյ», գրեալ է ՚ի խնդրոյ Ջուղայեցի Զէկկինց Միքայէլի որդի պարոն Գրիգորի որ ՚ի Մադրաս և ՚ի թախանձելոյ ժողովրդեան Հնդկաստանի. որոյ պատճառ տուեալ են Մուքիաս Շոռմեցի և Աբրահամ գաղատացի Հռոմէական վարդապետք, որք ջանային հերձուած արկանել ՚ի ժողովրդեան, ընդդէմ որոց հզօրագոյնըս կռուելով հանդերձ եկեղեցական շանթիւք յօրինէ և գիրս զայս, յորում Հայաստանեայց եկեղեցւոյ ուղղափառութիւնն ցուցանէ ընդդէմ Հռոմէականաց, այլ և ժ.բ. Առաքելոց համապատասխանութիւնն, այսինքն հանդերձ։ Յօրինեալ է մի կամ երկու ամաւ յետոյ քան զթուականն Հայոց ՌՄԻ (1771)։ Ի յառաջաբանին մանրամասն գրէ զկրօնական յուզմանց և զհերձուածոյ, որ եղեն ՚ի Հնդիկս։ Ածն է աշակերտեալ բառ ածոյ Մխիթարայ աբբայի։ Վերջին գլուխն է որ ՚ի վերայ կրօնական բաժանման Ազգիս մերոյ և ուղղութք դաւանողը նոցա կրկին ՚ի մայր եկեղեցին իւրեանց յորմէ հեռացան։